

# Ք Ր Ո Ն Ի Կ

Բարսեղ էֆէնտի Հայանեան նուիրած է ազգային Հիւանդանոցին 150 օսմանեան ոսկի:

Բագուի կուլտուրական ընկերութիւնը հրաման ստացած է փոխտնտեսութիւններ հաստատելու՝ Բագուի և Գանձակի գիւղերուն մէջ:

Գահրէի բարեգործական ընկերութիւնը 420 եգիպտական ոսկի ուղարկած է Հայաստան:

Պ. Լեւոն Սարգսեան կը դադրեցնէ իր «Մուրճ» ամսագիրը՝ որ գրական գեղեցիկ յիշատակներ կը թողու:

Ասիաբադի մէջ 2000 բուբլի հաւաքուած է Խրիմեան Հայրիկի անուամբ դպրոց մը բանալու համար:

Հայ չուժականոր Կիւտէնեան, 22 տարուան, մեծ համբաւ կը ստանայ Եւրոպայի մէջ և մեծ գովեստներ Անգլիացի, Ֆրանսացի, Աւստրիացի, Բելճ թերթերէ:

Մերկուրով հայ արձանագործը Խրիմեան Հ.ի գեղեցիկ կիսանդրի մը քանդակած է: Բագուի կուլտուրական միութիւնը մտադիր է Աբովեանի արձանը կանգնելու:

Համբաւաւոր հայագէտ-լեզուաբան Հիւալմա նը վախճանած է. յարգանք իր բազմարդին անցնալին, զոր պիտի ծանօթացնենք:

Սպանուած է եգիպտոսի մէջ՝ հանրածանօթ գրագէտ, հրապարակախօս, երգիծաբան Արփիար Արփիարեան:

Վսեմ. Բարթոլ փաշան 1500 ֆր. նուիրած է Արմաշի:

Կովկասի փոխարքան, արդեամբ Ա. Քալան, թարի և նպատաստանոց Յանձնաժողովին, յանձն առած է 2,652,000 բուբլի խնդրել ներքին գործոց նախարարութենէն՝ հայ սովելոց համար:

Վսեմ. Պօզոս փաշա Նուպար 40,000 ոսկի նուիրած է ազգային կրթական գործին. 15000 Քալստեան վարժարանի համար, իսկ 25000 հայ համալսարանական ուսանողներու:

Ռուս կառավարութիւնը նաւթարդիւնաբերական խորհրդակցութեան համար լիազօրներ ընտրել հրամայած է բանուորներուն: Ընտրուած են 15ի չափ սոցիալ-դեմոկրատ, 130 դաշնակցացի:

Բարեգործական ընկերութիւնը յանձն առած է շարունակել Չէյթուի որբանոց-արհեստանոցը, որ փակուելու վտանգի մէջ էր:

## Ն Ա Մ Ա Կ Ա Ն Ի

Թիֆլիզ «Մշակ». — Դեկտեմբերի Բազմավէպին մէջ չարամիտ ակնարկութիւններ կը կարծէք գտնել Ձեր օրագրի մասին: Ամենէն բարեհաճակմանը անոնք չեն որ ոչ մէկ

դիտողութիւն կը ներկայացնեն՝ մարդու մը կամ թերթի մը նկատմամբ: Ի զուր բարոյական ցաւը կը տեղծէք Ձեզ՝ Բազմավէպը Ձեր գէմ նկատելու: Այսպիսի հասկացողութեանց առիթ չտալու համար միայն չենք երկարեր խնդրոյն վրայ, անկեղծ փափագով լլալով Արծուրույն թերթի յաշու ղութեանց:

Կ. Պօլիս. Հ. Ս. Ս. Մ. — Ձեր ներկայացուցած քերթուածը՝ խրալուի ծանօթ բանաստեղծութեան մը հետեւողութիւն՝ գեղեցիկ է լեզուական շնորհալի և ճապուկ արտայայտութեամբ:

Թիֆլիս. Գ. Ն. — Թուղթի տեսակի և լուսանքի տարբերութիւն. Բազմավէպի գրական ծաւալը նոյն է միշտ. այս մասին ոչ մի փոփոխութիւն:

Վիեննա. Հ. Ն. Ալիսեան. — Ըստ նոյն բանասէրի՝ նախնեաց գործածած Ծաւալախօս մակդիրը պէտք է դնէիք Թորովի տեղ. — փոխդրոյնի ստաղադարձութեան մասին անպարտ էք:

ԱՆՏՈՒԱՅ Ե ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1908 թ.

## Վ Տ Ա Կ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹԻ

Գինն է՝ Ռուսաստան 8 բուբլի, արտասահման 12 բուբլի, Պարսկաստան 9 բուբլի: Տարեկան բաժանորդները կարող են վճարել մաս-մաս, յունուարին 4 բ. մարտին 2 բուբլ. և յունիսին 2 բուբլի: Տարեկան բաժանորդները բացի օրաթերթից կը ստանան նաեւ մի ձրի յաւելած — (200-300 մեծադիր երես)

«Գրական-Գիտական ժողովածու», որ լոյս է տեսնելու յունուար ամսին, աշխատակցութեամբ՝ Ա. Ահարոնեանի, Ա. Աղաբեկեանի, Ե. Թոփչեանի, Յով. Թումանեանի, Յ. Թաղեանի, Ա. Խահակեանի, Գ. Խաժակի, Սիմ. Յակոբեանի, Միք. Յովհաննիսեանի, Լ. Նազարեանի, Գ. Ղազարեանի, Յ. Շահպազեանի, Ս. Շիխանի և ուրիշներ:

Դրամ փոխադրել անպայման հետեւեալ հասցեով. Тифлисъ, почтов. ящ. № 23. Левону В. Абовьяну.